«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Անժելա Քարիմյան

Ուսումնական հաստատություն՝ Քարկոփի միջնակարգ դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն. . . . . .

Գլուխ I.Առակների ուսումնասիրումը և ընկալումը միջին դպրոցում

Գլուխ II. Աստվածաշնչյան առակների գործնական կիրառությունը

Եզրակացություն . . . . . .

Օգտագործած գրականության ցանկ. . . . . .

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման զարգացնող գործառույթի բովանդակությունը անձի մտավոր զարգացումն է, իմացական որակների ձևավորումը: Երեխայի մտավոր զարգացումը ավելի արագ է իրականանում գիտելիքների ձեռք բերման ընթացքում, սակայն զարգացման աստիճանը մեծապես պայմանավորված է ոչ թե գիտելիքների չափով, այլ ուսուցման գործընթացի կառուցվածքով և առանձնահատկություններով: Օրինակ՝ զարգացնող ուսուցման ընթացքում տեղի է ունենում աշակերտների զգայական ընկալումները, շարժողական, մտավոր-ինտելեկտուալ, կամային, էմոցիոնալ, մոտիվացիոն ոլորտների զարգացումը: Հենց այդպիսին է նաև առակների ուսուցման գործընթացը, որը իրենից ներկայացնում է համագործակցային ուսուցում և պահանջում է հնարավորինս հստակ կազմակերպում:

Մանկավարժության մեջ ուսուցման գործընթացի կառուցվածքի վերաբերյալ ձևավորվել են տարբեր մոտեցումներ: Ուսուցման նոր՝ ճանաչողական գործունեության վրա հիմնված ուսուցման կառուցվածք է առաջարկում ամերիկացի մանկավարժ և հոգեբան Բենջամեն Բլումը: Ըստ նրա ուսուցման թաքսոնոմիայի(համակարգի)՝ ուսուցման գործընթացին հատուկ են 6 հիմնական աստիճան՝ գիտելիք, իմաստավորում, կիրառում, վերլուծություն, համադրում, կշռադատում կամ գնահատում:

Աշխատանքը բաղկված է ներածությունից, երկու գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել, թե ինչ դեր ունեն աստվածաշնչյան առակները սովորողի ուսումնական գործընթացի զարգացման և գիտելիքների ձևավորման վրա:

ԳԼՈՒԽ I

Առակների ուսումնասիրումը և ընկալումը միջին դպրոցում

Առակը չափածո կամ արձակ փոքրածավալ ստեղծագործություն է, որն ունի այլաբանական իմաստ և բարոյախրատական բովանդակություն: Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից: Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության բացասական գծերը մատնացույց են արվում այլաբանորեն: Մեծերի իմաստությունն ու խրատականությունը մատաղ սերնդին փոխանցելու հիանալի օրինակ է : Առակների տարբերակիչ հատկանիշը նրանց փոքր ծավալն է, փոխանցվող մտքի հակիրճությունը: Առածները, ինչպես հեքիաթները, հիմնված են պատմության վրա, բայց դրանց իմաստն ավելի խորն է: Արժեքային առումով դրանք ավելի մոտ են ժողովրդական առածներին ու ասացվածքներին:

Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական

գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները:

Հայ գրականության մեջ առակագրությունն սկզբնավորվել է թարգմանությունների միջոցով. դրանք ամփոփվել են «Բարվախոս» («Բարոյախոս») և «Ոլիմպիանի (Ողոմպիանի) առակները» ժողովածուներում, որոնք հունարենից թարգմանվել են V–VI դարերում, այլ տվյալով՝ VII դարում: XI–XIII դարերում ձևավորվել է հայ ինքնուրույն առակագրությունը: Մեծ ժողովրդականություն են վայելել Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները: Վարդան Այգեկցու անունով պահպանվել են առակների ժողովածուներ, որոնցից ամենահայտնին «Աղվեսագիրքն» է: Ահա «Իմաստուն զինվորը» առակը «Աղվեսագրքից»: Մի ոմն իմաստուն զինվոր պատերազմ էր գնում, և նա երկու ոտքով կաղ էր: Եվ զինվորներից մեկը նրան ասաց. «Ով ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն, որովհետև փախչել չես կարող»: Եվ նա ասաց. «Ով անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»: Այս առակն հայրենասիրության լավագույն օրինակն է: Հայ գրականության մեջ առակներ են գրել նաև Խաչատուր Աբովյանը, Ղազարոս Աղայանը, Ավետիք Իսահակյանը, Խնկո Ապերը, Հովհաննես Շիրազը, Մկրտիչ Կորյունը և ուրիշներ:

Գլուխ II

Աստվածաշնչյան առակների գործնական կիրառությունը

Սովորողի արժեքային կողմնորոշման, արժեքային գիտակցության, արժեքային վարքագծի ձևավորումը սկսվում է դեռևս տարրական դպրոցից և կրում շարունակական բնույթ: Երեխան դեռևս տարրական դպրոցից բացահայտում է գեղեցիկը, արդարը, սերը և նման համամարդկային արժեքներ, որոնք արմատավորվում են անհատի հոգևոր աշխարհում : Ի լրումն այս ամենի `հոգևոր , բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Հիսուսը առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝ բարօրարության, լույսի, մարդասիրության դասեր տալով: Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին `անդրադառնալու Հիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ է:

Դաստիարակության հետ կապված աստվածաշնչյան ասացվածքներից ամենահայտնիներից մեկը Առակաց 22: 6-ն է. Սա խոսում է ձեր ` որպես ծնողի ` ձեր ճիշտ ուղին տանելու պատասխանատվության մասին: Ճանապարհը, որը նա պետք է անցնի, վերաբերում է երեխայի կյանքի ուղղվածությանը: Այս համատեքստում ծնողների դերը երեխային աստվածային իմաստության ձևերին պատրաստելն կամ նվիրելն է: Նպատակը դաստիարակել երեխային, որը դառնում է հասուն, պատասխանատու չափահաս, ով սիրում է Աստծուն և ուրիշներին: Աստվածաշնչի առածները հագեցած են աստվածային իմաստության ուսմունքներով: Եթե նայեք 22-րդ գլխի մնացած մասը, ապա այն կգտնեք իմաստության խոսքերով լի : Կարևորը `սովորել, թե ինչպես այն կիրառել առօրյա կյանքում:



Անիրավ տնտեսի առակը

Տանուտերն Աստված է, տնտեսն էլ մարդն է: Աշխարհի բոլոր բարություններն Աստուծո ունեցվածքն են: Մարդը դրանց տերը չէ, այլ մատակարարող պաշտոնյան: Աստված աշխարհի բարությունները մարդուն է հանձնել, որ այս աշխարհում դրանք օգտագործելով՝ հանդերձյալ աշխարհի համար արդյունք և շահ պատրաստի: Աշխարհի բարիքները մարդու ձեռքում ժամանակավոր են: Մի օր դրանք այլևս ձեռքի տակ չպիտի ունենաս: Աստված դրանք հանձնել է, որպեսզի նա որևէ ձևով օգտվի այդ բարիքներից, և երբ դրանք իր ձեռքից պակասեն, այսինքն՝ երբ մարդը մեռնի, իր ապագա կյանքում այս աշխարհի մատակարարությունից օգուտ քաշած լինի:

Ուշագրավ է նաև օգուտ քաղելու ձևը: Երբ տնտեսը մուրհակները փոխել էր տալիս, նա կարող էր օգտվել տարբերության գումարից՝ նույն պահին պարտապաններից պատշաճ մաս ստանալով, բայց տնտեսի նպատակն էր շահել

միայն պարտապանների երախտապարտությունը, որպեսզի երբ պաշտոնից ազատվի, նրանց տներում բնակություն և կերակուր գտնի: Նա ցանկացավ ընկերներ ձեռք բերել՝ մարդկանց լավություն անելով, որ ընկերոջն արած լավությունից մի օր էլ ինքը օգտվեր: Առակի նպատակն է հասկացնել և ուսուցանել, թե մարդ պարտավոր է ձեռքում եղած աշխարհի բարիքներից ընկերոջը օգուտ հանել, օգնել, նպաստել, ողորմել:Բերենք ևս մեկ առակի օրինակ:

Հոր հրամանը

Մի հարուստ մարդ միայն մի որդի ուներ. Մահից առաջ հայրը նրան երեք խորհուրդ է տալիս՝ երբեք առաջինը մի բարևիր, ամեն երեկո քաղցրավենիք կեր, ամեն առավոտ նոր կոշիկներ հագիր:

Երբ հայրը մահացավ, որդին սկսեց կատարել հոր կամքը: Առաջինը չբարևելու հետևանքով գյուղում բոլորը դադարեցին նրա հետ խոսել, իսկ գումարը գնաց քաղցրավենիքի ու կոշիկի վրա:Հետո նա եկավ մոր մոտ և հարցրեց.

-Հայրս չէր կարող իմ թշնամին լինել, ինչո՞ւ է ինձ նման հրաման տվել:

Իսկ մայրը պատասխանեց.

-Պատվերը նշանակում է՝ վեր կաց բոլորից առաջ և աշխատիր դաշտում, այնուհետև անցորդները քեզ առաջինը կողջունեն: Երկրորդ պատվիրանը նշանակում է՝ եթե ամբողջ օրը աշխատես, երեկոյան ցանկացած ուտելիք քաղցր կթվա: Երրորդ պատվիրանը նշանակում է, որ քնելուց առաջ պետք է կարգի բերել հագուստը, որպեսզի առավոտյան բոլորին նոր թվան:

Հաջորդ առավոտից երիտասարդը հոր հրամանով սկսեց փոխել կյանքը: Որոշ ժամանակ անց նա հարստացավ, ամուսնացավ մի գեղեցիկ աղջկա հետ և այս հրահանգը փոխանցեց իր երեխաներին: Առակի բարոյախրատական մասից օգուտ քաղելու համար նախ պետք է ընկալել այն:

Հարուստի եւ աղքատ Ղազարոսի առակը

Հարուստը մահանում և ընկնում է դժոխք, իսկ աղքատ Ղազարոսին Աբրահամն է առնում իր գիրկը դրախտում: Հարուստը խնդրում է, որ Աբրահամը թույլ տա Ղազարոսին՝ օգնելու թեթեւացնել իր տանջանքները, սակայն մերժվում է: Երկրային կյանքում հարուստը որևէ կերպ չօգնեց Ղազարոսին, ով նրա ապարանքի դռների մոտ ողջ կյանքն ապրեց սովատանջ, այլ իր ողջ կարողությունը վատնում էր խրախճանքների ու շվայտ կյանք վարելու վրա: Տեսնելով, որ ինքն անհուսալի վիճակում է, հարուստը խնդրում է Ղազարոսին հետ ուղարկել, որպեսզի վկայի իր հինգ եղբայրներին դրախտի եւ դժոխքի մասին, որովհետև հանդերձյալ աշխարհից վերադարձածին նրանք կհավատան եւ կապաշխարեն: Սակայն Աբրահամը պատասխանեց նրան. «Նորանք Մովսէսին եւ մարգարէներին ունին, թող նորանց լսեն: Նա էլ ասեց. Ոչ, հայր Աբրահամ, այլ եթե մեռելներից մէկը նորանց մօտ գնայ, կապաշխարեն: Եւ նորան ասեց. Եթէ Մովսէսին եւ մարգարէներին ականջ չեն դնում, չեն էլ համոզուիլ՝ եթէ մեռելներից մէկը յարութիւն առնէ»: Ղուկաս 16:29-31

Անպետք աղը

-Աղը լավ բան է, բայց եթե իր համը կորցնի, ինչո՞վ պիտի աղեն այն: 35 Ո՛չ հողին է օգտակար, ո՛չ էլ կարելի է դրանից պարարտանյութ պատրաստել, այլ դուրս են թափում: Ով լսելու ականջ ունի, թող լսի:

Վերլուծություն

Ըստ իս, այս առակը նշանակում է, որ ամեն ինչը չափի մեջ է գեղեցիկ: Հիսուսը մեզ աղի օրինակով է ցույց տալիս, բայց իրականում դա մարդկանց օրինակն է և եթե

մարդու բնավորությունը լավը չի լինում և, եթե նա լավ մարդկանց անիմաստ տեղը զզվեցնի, այդ մարդիկ կարող է մի քանի անգամ ներել, բայց ոչ անընդհատ:

Աշակերտ լինելու գինը

Մեծ թվով ժողովուրդ էր գնում Հիսուսի հետ: Հիսուսը, դառնալով նրանց, ասաց.

-Ով որ գալիս է ինձ մոտ և ինձ ավելի չի սիրում, քան իր հորն ու մորը, կնոջն ու զավակներին, եղբայրներին ու քույրերին և նույնիսկ իր անձը, չի կարող ինձ աշակերտ լինել, որովհետև ով որ իր խաչը չի վերցնում և ինձ չի հետևում, ինձ աշակերտ լինել չի կարող: Եթե ձեզնից մեկն ուզենա մի աշտարակ շինել, նախ չի նստի և չի հաշվի ծախսերը՝ տեսնելու համար, թե գործը վերջացնելու համար բավարար դրամ ունի՞: Այլապես, երբ հիմքը դնելուց հետո չկարողանա աշտարակն ավարտել, բոլոր տեսնողները կսկսեն ծիծաղել նրա վրա՝ ասելով. «Այս մարդն սկսեց կառուցել, բայց չկարողացավ ավարտել»: Կամ եթե մի թագավոր տասը հազար հոգուց բաղկացած բանակով ուզենա պատերազմի դուրս գալ մի ուրիշ թագավորի դեմ, որ իր վրա եկել է քսան հազար հոգուց բաղկացած բանակով, նախ չի նստի և չի մտածի, թե արդյոք կկարողանա՞ հաղթել նրան: Այլապես, դեռևս հեռվից նա պատգամավոր կուղարկի՝ հաշտություն խնդրելու նրանից: Այդպես էլ՝ ձեզնից նրանք, ովքեր չեն կարող հրաժարվել իրենց ամբողջ ունեցածից, ինձ աշակերտ լինել չեն կարող:

Առակը կցուցանի, որ յուրաքանչյուր բան իր գինն ունի և որոշներին հասնելու համար ստիպված ենք կորցնել, հաճախ զոհաբերել մեկ ուրիշ երազանք:

Ինչպես շահեցնել դրամը

Մինչ ժողովուրդը լսում էր նրա ասածները, Հիսուսը շարունակեց իր խոսքը և Երուսաղեմին մոտեցած լինելով ու գիտենալով, որ ժողովուրդը կարծում է, թե Աստծու արքայությունը շուտով հայտնվելու է, հետևյալ առակը պատմեց նրանց.

Մի ազնվական մարդ կար, որ գնաց հեռու երկիր, որպեսզի թագավորական

իշխանություն ստանա և վերադառնա իր երկիրը։ Նախքան մեկնելը կանչեց իր ծառաներից տասը հոգու, յուրաքանչյուրին տասը ոսկի դրամ տվեց և ասաց. «Շահեցրե՛ք այս դրամը, մինչև վերադառնամ»: Բայց նրա համաքաղաքացիներն ատում էին նրան, ուստի և պատգամավոր ուղարկեցին նրա հետևից՝ ասելով. «Չենք ուզում, որ նա թագավոր դառնա մեզ վրա»: Երբ ազնվականը թագավորական իշխանությունն ստացած վերադարձավ, անմիջապես կանչեց իր ծառաներին, որոնց դրամ էր տվել, իմանալու համար, թե ով ի՛նչ է շահել։ Առաջինը եկավ և ասաց. «Տե՛ր, քո մեկ տվածի դիմաց տասը շահեցի»: Տերն ասաց. «Ապրե՛ս, բարի՛ ծառա, քանի որ այդ փոքր բանի մեջ հավատարիմ եղար, քեզ տասը քաղաքների վրա կառավարիչ եմ եմ նշանակում»։ Երկրորդ ծառան էլ եկավ և ասաց. «Քո մեկ տվածի դիմաց հինգը շահեցի»: Տերն ասաց. «Քեզ էլ հինգ քաղաքների վրա եմ կառավարիչ նշանակում»: Եկավ երրորդը և ասաց. «Տե՛ր, ահա քո տված դրամը, այն պահել էի մի թաշկինակի մեջ ծրարած։ Վախենում էի քեզնից, որովհետև խիստ մարդ ես. վերցնում ես, ինչ որ քոնը չէ, և հնձում ես, ինչ որ չես սերմանել»: Տերը նրան ասաց. «Չա՛ր ծառա, քո խոսքո՛վ եմ դատելու քեզ։ Քանի որ գիտեիր, թե ես խիստ մարդ եմ, վերցնում եմ, ինչ որ իմը չէ, և հնձում եմ, ինչ որ չեմ սերմանել, հապա ինչո՞ւ իմ դրամը շահարկողներին չտվեցիր, քանի որ գիտեիր նաև, թե վերադարձիս այն տոկոսով էի պահանջելու քեզնից»:Ապա սպասավորներին ասաց. «Վերցրե՛ք սրանից դրամը և տարե՛ք, նրա՛ն տվեք, ով տասնապատիկն է շահել»: Նրանք ասացին. «Տե՛ր, նա արդեն տասնապատիկն ունի»:

«Իմացե՛ք, -ասաց նա,-ունեցողին ավելիով պիտի տրվի, իսկ չունեցողից պիտի վերցվի իր ունեցած ամենափոքր բաժինն էլ։ Իսկ իմ թշնամիներին, որոնք չէին ուզում, որ թագավոր լինեմ իրենց վրա, բերե՛ք այստեղ և սպանե՛ք նրանց իմ ներկայությամբ»:

Վերլուծություն

Այս առակում դրամը համեմատվում է մարդու տաղանդի հետ: Ամեն մարդ ծնվելուց ստանում է մի յուրօրինակ ունակություն, հնարավորություն, տաղանդ: Երբ դու այն արտահայտում ես, ցույց տալիս բոլորին դու շահում ես, իսկ եթե այդպես քո մեջ թողնում ես, ապա այն չի բացվում, չի ծաղկում և փակվում է հավերժ: Միշտ հիշեք, որ տաղանդ ունենալը՝հնարավորություն է՝տրված Աստոց, որը պետք է օգտագործել:

Բարի սամարացին

Այս հարցի վրա Հիսուսն ասաց՝ Մի մարդ Երուսաղեմից Երիքով էր իջնում: Ճանապարհին ընկավ ավազակների ձեռքը, որոնք կողոպտելով մերկացրին նրան, վիրավորեցին և կիսամեռ վիճակում թողեցին ու գնացին: Այնպես պատահեց, որ մի քահանա էր անցնում նույն ճանապարհով: Սա տեսավ վիրավորին, բայց ճանապարհը շեղելով՝ անցավ գնաց: Նույնպես և մի ղևտացի, նույն տեղով անցնելիս, տեսավ վիրավորին և ինքն էլ շրջանցեց, գնաց: Բայց մի սամարացի, որ այդ տեղով էր անցնում, տեսավ վիրավորին ու գթաց: Մոտեցավ նրան և փաթաթեց վերքերը՝ դրանց վրա ձեթ ու գինի լցնելով: Ապա դրեց իր գրաստի վրա, տարավ մի պանդոկ ու խնամեց նրան: Հաջորդ օրը, երբ մեկնելու էր պանդոկից, երկու արծաթ դահեկան տվեց պանդոկի տիրոջը և ասաց. «Խնամի՛ր նրան և ինչ ծախս որ անես նրա վրա, մյուս անգամ գալուս կվճարեմ»:Հետո Հիսուսը հարցրեց. -Արդ, քո կարծիքով, այդ երեքից ո՞ր մեկը եղավ ավազակների ձեռքն ընկնողի ընկերը:

Օրենքի ուսուցիչն ասաց՝ Նա, ով հոգատար եղավ նրա հանդեպ: Հիսուսն ասաց՝ Գնա՛ և դո՛ւ էլ նույնն արա:

Վերլուծություն

Միշտ պետք է լինել հոգատար մարդու հանդեպ։ Հոգատար լինելով միգուցե դու մեկ ուրիշին շատ օգնում ես, բացի դրանից դու ինքդ քեզ կարծես օգնես,քանի որ ուրիշին բարի մի բան անելով դու քեզ այնքան լավ ես զգում, սրտիդ խորքում ուրախանում, որ ինչ-որ մեկին օգնել ես։ Հոգատար պետք է լինել բոլորի հանդեպ, անգամ թշնամուդ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, ամփոփելով կարող ենք ասել, որ առակների ուսուցումը շատ կարևոր է դպրոցականի համար, քանի որ առակներից կարելի է պատկերացում ստանալ միմյանց հարևանությամբ (հաճախ նույն քաղաքում) ապրող ժողովուրդների ազգամիջյան հարաբերությունների մասին: Ստեղծված լինելով գերազանցապես քաղաքային միջավայրում՝ առակագրքերի մեջ եղած ստեղծագործություններում արտացոլվել է այդ միջավայրի կյանքն ու կենցաղը: Առակների գործող անձերը մարդիկ են՝ իրենց ծաղրվող թերություններով ու դրվատվող առաքինություններով, և կամ կենդանիներ, թռչուններ և այլն: Բոլոր դեպքերում նրանք այլաբանորեն անձնավորված են, ընթերցողը ի դեմս նրանց, տեսնում է մարդկանց, նրանց հատկանիշների մեջ մարդկային հատկանիշներ, հարաբերությունների մեջ մարդկային հարաբերություններ:

Առակներն այսօր էլ կիրառելի են առօրյա կյանքում, և եթե սովորողը մանրակրիտ ուսումնասիրի, կարող է առակի բարոյախրատական իմաստը ծառայեցնել ոչ միայն այն նպատակին, որ գտահատական ստանա, այլև օգուտ քաղի առօրյայում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006

2. Ղևոնդ Ալիշան, Յաղագս իսկագիր և նախագաղափար օրինակի Գրոցն դաստաստանի Մխիթարայ Գօշի.

3. Մ. Աբեղյան, Երկեր Դ, Երևան, 1966

4. Ն. Տողանյան, Հ. Խաչատրյան, Գրականություն 9, Երևան 2012

5. « Մխիթար Սեբաստացի » կրթահամալիրի պաշտոնական կայքէջ

6. https://arghutyanani.wordpress.com

7. https://hy.wikipedia.org